կազբական կարգով, բոլոր այն օրէնքները, որոնք կամ ընդհանուր-պետական նշանակութիւն ունեն և կամ, ժամանակին, առարկայ են եղել առանձնապէս լուրջ ուշադրութեան և պայքարի հասարակական տարբեր խաւերի կողմից: Այդպիսիներից առաջին տեղն է գրաւում բամբակի մենաշնորհին վերաբերող օրէնքը, որից և սկսում ենք.

1. Բամբակի մենավաճառութեան մասին. — 1) *Հայաստանի Հանրապետութեան տերիտորիայի վրա բամբակի առևտուրը յայտարարւում է պետութեան մենաշնորհ.*

2) *Այս օրէնքի հրատարակութեան օրից արգելւում է բամբակ արտահանել Հայաստանի Հանրապետութեան սահմաններից:*

3) *Բամբակի վրա հաստատուն գին կը սահմանւի առանձին օրէնքով:*

4) *Բամբակատէրը պարտաւոր է այս օրէնքի հրատարակութեան օրից եօթ օրւայ ընթացքում գրաւոր յայտարարութիւն տալ ակցիզային հարկերի վարչութեան, ո՞րտեղ և որքա՞ն բամբակ ունի:*

5) *Ակցիզային վարչութեան վրա դրւում է պարտականութիւն հարկի տակ առնել Հայ. Հանրապետութեան մէջ գտնւած ամբողջ բամբակը:*

6) *Այս օրէնքը խախտելու մէջ յանցաւորները ենթարկւում են դատաստանական կարգով հետևեալ պատիժներին. ա) սահմանած ժամանակում գրաւոր յայտարարութիւն չտալու համար բամբակի քանակութեան և տեղի մասին դրամական տուգանքի մինչև տասն և հինգ հազար ռուբլի, բ) բամբակը թաղցնելու համար, գաղտնի գնելու և վաճառելու համար և Հայաստանի սահմաններից արտահանելու համար բանտարկութիւն երեքից մինչև վեց ամիս, որի հետ միասին բամբակն էլ է գրաււում. եթէ անհնար լինի բամբակը գրաւել, այդ դէպքում յանցաւորը բացի բանտարկութիւնից ենթարկւում է դրամական տուգանքի չգրաւած բամբակի արժէքի չափով:*

7) *Ներկայ օրէնքը գործադրութեան է տրւում 1918թ. յունիսի 20-ից:*

(Հաստատւած սեպտ. 11-ին 1918թ.)

Դպրոցների կառավարութեան մասին. — 1) *Դպրոցը Հայաստանի Հանրապետութեան մէջ պետութեան մենաշնորհ չէ: Իրաքանչիւր հասարակութիւն կամ համայնական կազմակերպութիւն, խմբակցութիւն, ընկերակցութիւն, ինչպէս և առանձին անհատ, իրաւունք ունեն անարգել դպրոց բանալու և անկախօրէն վարելու սեփական միջոցներով:*

2) *Պետական գանձարանի նպաստատուութիւնը չպէտք է նկատւի որպէս հիմք և նշան դպրոցները պետական կամ կառավարական համարելու կամ դարձնելու:*

3) *Մերժելի է դպրոցի պետականացման կարգը և դերադասելի է ազատ հասարակական դպրոցական սիստեմը:*

4) *Պետական գանձարանից նպաստ ստացող դպրոցներին կառավարութիւնը յանձնում է. ա) հանրային կրթութեան մինիստրին և նրան կից Դպրոցական Խորհրդակցութեան, բ) տեղական ինքնավար մարմիններին, գ) դպրոցական շրջանային տեսուչներին, դ) դպրոցների մանկավարժական խորհուրդներին, տեսուչներին, աւագ ուսուցիչներին և հոգաբարձութիւններին:*

5) *Հանրային կրթութեան մինիստրին կից, նրա նախագահութեամբ, խորհրդակցական ձայնի իրաւունքով, կազմակերպւում է դպրոցական խորհրդակցութիւն, մինիստրի կողմից հրաւիրւած անձերից:*